

ARCHIVE COPY
Please return.

Second Class
Postage Rate
Paid at
New York, NY



Outreach

Հայաստանի Ամերիկայի Առաքելական Թեոսի Ազգային Առաջնորդարանի
A Publication of the Prelacy of the Armenian Apostolic Church of America

Volume XV, Number 4 — October 1992

Հայաստանի Անկախութեան Տարերարձը

Մեծի Տանն Կիլիկիոյ Միացեալ Նահանգներու Աբեւեյեան թեմի եւ Գանատայի Առաջնորդ, Բարձրաշնորհ Ս. Մեսրոպ Ա. Արք. Այճեան, Հայաստանի Անկախութեան առաջին տարեկարճին առիթով, Իր հայրական այցելութեան ընթացքին շնորհիւ ծովերէ, Կիրակի, Սեպտեմբեր 20, 1992-ին:

Յաւարտ Ա. Անձնակ Պատարագի, Սրբազան Հայրը կատարեց Հանրապետական յատուկ մարթնար: Օրհնեց մեր պաշտելի Ծառգոյն Իրօշը, ու ապա տուաւ օրուան յատուկ իր հայրական հոգեւորանչ եւ իմաստակ պատգամը, բնաբան ունենալով, Պօղոս Սրբազան առաքեալին երկրորդ կործնացող ուղղութեամբ թուղթին, շրջապատը գլուխ համար 18-ը:

«Ուր որ Տիրոջ հոգին է այնտեղ Աստուծին է»:

Աստուած՝ մարդը ստեղծեց իր պատկերին պէս: Տուաւ անոր շունչ, հոգի, որպէսզի ազատօրէն մտածէ, խորհի, որոշման, գործէ իրեն յատուկ տաղանդով, միշտ բարիքին, միշտ լաւագոյնին համար: Մարդ սրբաբան իրաւունք չունի եղծանելու Աստուծոյ պատկերը, շունչը, հոգին եւ նկարագիրը, որ շնորհ մըն է տրուած Աստուծով: Մարդ սրբաբանը, պէտք չէ մտնայ որ Աստուծոյ շնորհիւ կենդանութիւն ստացած է: Հոգին մի շիջուցանէք կըսէ առաքեալը, ինչեց Սրբազան Հայրը: «Շարունակելով Իր հայրական պատգամը, շեշտեց որ «իւրաքանչիւր անձաւ եւ ազգ, եթէ կանգնուան Տիրոջ հոգիին ներկայութեանը իրենց հոգիներուն մէջ, չեն կրնար ըմբռնել եւ հաղկնալ Ազատութեան իմաստը եւ արժէքը»:

Սրբազան Հայրը յիշեց որ «ինչ՝ Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոս, Իր մէջ ունէր Տիրոջ հոգին, առանց որուն պիտի չկարենար Իր առաքելութիւնը յայդուրեմամբ պսակել»:

Յիսուս երբ սատանայէն փորձուեցաւ ու իր թաղաքը՝ Նազարէթը դարձաւ, տաճար այցելեց: Երբ Իրեն ներկայացուցին ճապեայ Սարգսիւնին գերբը, Նեոնեայ տողերը կարգաց: «Տիրոջ հոգին իմ վրաս է, գին օծեց ատոր համար իսկ, գին որպէս արթաններուն Աւետարանելու, սրտաբեկ հոգիները բժշկելու, գերիներուն Ազատաբախմ թարգմանելու, կորելորուն տեսողութիւն տալու եւ կենդանաները Ազատ արձակելու»: Հայ ժողովուրդը առաջին օրէն իսկ Իր մէջ ունենալով Աստուծոյ հոգիին ներկայութիւնը, իրաւունքը ստացաւ Ազատ լլլալու, Ազատ ապրելու:

Հայ ժողովուրդի ունեցած ճշմարիտ գրգռումներն ու հաւատքը, մարդ կակին տրուած ազատութեան մասին, հայ քանադասները, Միքայէլ Նալպանտեան երգով մը կը բացատրէ:

Ազատն Աստուած այն օրին, Երբ իսկեցաւ շունչ փչել, իմ իտղանիւք շրնուածքիմ, կենդանութիւն պարգեւեց:

Եւ անբարբառ մի մանուկ, Երևոյ ձուրձ պարգեցի, Եւ իմ անգոր թիւերով Ազատութիւն գրիւցի:

Այդ պիտեմներ. Ազատ Աստուծոյ շունչովը մեր Հայ ժողովուրդը, առաջին օրէն իսկ, գրկեց Ազատութիւնը եւ կը շարունակէ պահել գայն իր գրկին մէջ ամենայն գուրգուրով:

Սրբազան Հայրը գեղեցիկ օրինակ մը բերելով ցաւաւ. «Ինչու համար Հայկ Նահապետը որ խաղաղօրէն կ'աղբէր Բաբելոնի մէջ, ձգեց ու գնաց քարաշատ Հայաստան: Պարզ է: Ուզեց ազատ լլլալ: Ուզեց անկախ լլլալ: Հայոց պատմութեան մասնակի մէջ բազմաթիւ ներդաստատում մարտնչութեան կան արձանագրուած որոնք մտուած են վառն ազատութեան:

Վարդանանք եւ Ղեւոնդեանք եւ անել ուղ վահանանք, վասն կրօնի եւ հայրենեաց ազատութեան յանձնարին Նահատակուիլ իրենց արեան գնով»:

Պատմութիւնը վկայ է ցաւաւ Սրբազան Հայրը: «Եղած ենք աշխարհակալ: Ունեցած ենք թագաւորական տուններ: 1375-ին, բռնակալ ուժեր փերջ տուին Լուսինեան թագաւորութեան: 600 երկար տարիներ հայը ապրեցաւ ստրկութեան մէջ եւ սակայն իր մէջ միշտ պահեց Տիրոջ հոգին, շունչը, որ ազատութեան ձգտումն է»:

Յիսուս փեց հարիւր տարուան ստրկութեան արեւը նորէն ծագեց Մասիսի գագաթին, 1918. Մայիս 28-ին: Անկախացաւ մեր գերեզմանաւոր Հայրենեքն ու ժողովուրդը: Ունեցանք Խորհրդարան, Եռագոյն Դրօշ, Պետական Զինանշան, Հիմն եւ Դրամանիչ: Աժիտ'ս սակայն որ միայն երկու տարի տեւեց:

Հայ ժողովուրդի յաւիտենական թեան տարիներուն վրայ, անասուած Աթախնը եւ իր յաջորդները նոր գերութեան 70 տարիներ անկեցուցին: Բայց Հայ ժողովուրդը յոյսը եւ հաւատքը ունէր, որ ուշ կամ կանխաբան լուծելու պիտի տալային:

Ու պատահեցաւ հրաշքը: Պղնձ-Կիզմը տապալեցաւ, փշուր-փշուր եղաւ:

Փերեակ ազգերը ազատագրուեցան, որունց կարգին մեր Հայրենիքը Հայաստան: Անցեալ տարի Հայաստանի ազատաննէ մեր Հայ ժողովուրդը:

(Շար. էջ 2)

ՄԵՐԻԿԱՅԻ ՈՐԻՆ ԵՒ ՀՈՅ ԱՅՐԻՂ

Մեր Կողմէ

1992 Հոկտեմբերին կը մշուի Ամերիկայի «Գիտ»-ին հինգիսարիւրամեակը: Տարիներ առաջ պետական գետնի վրայ յանձնարարութիւնը կազմուեցան եւ լայնաշունչ ծրագիրներ վշակուեցան հոյակախ իսկապետ մարտաբանութեան գիտը: Քուրականը հասաւ, քայց ինչպէս անգլիերէն կըսեն «non-event»՝ եղաւ այս մեծ քուրականը: Եւ թէւ Եւրոպայի մէջ բազմաթիւ երատարարութիւններ եւ ձեռնարկներ իրարու կը յաջորդեն, այստեղ, Միացեալ Նահանգներու մէջ այս կեղտարեան հանգրուանը գրեթէ աննշմար կ'անցնի, քանի սերունդները կրկրի տնտեսական կացութեան բնրած մտահոգութեան եւ նախագահական ընտրութեան քննարկում մէջ:



Փոլոմպոս յարապակեօրէն կը տնէ Պարուլոնա

Ճիշդ է, կայ նաեւ բարոյական իարցադրում մը: Ի՞նչ էր Փոլոմպոսի գործին մեծութիւնը: Արկածախնդիր եւ տնայապաշտ հոգիի մը քառիչքը, որով բարդը ունեցաւ Հնդկաստանի մոր ճարտարութեան վրայ հանդիսարար մոր ցամաքամասի մը՝ որ իր անուանը իսկ պիտի չկրէր՝ քանի այդ պատիւը տրուեցաւ Ամերիկոս վեսպուցիին, թէ Փոլոմպոս առիթ տուաւ որ նորայայտ ցամաքամասին վրայ ազդող բնիկներու անդադր կեանքը խաթարուի, եւ արդիւն, հիւանդութեանց հետաւումով անհետուի ընկի ցեղերը:

Մեզի իսկապետ, ինչպէս աշխարհի բոլոր ժողովուրդներուն, Ամերիկան դարձրէ ի վեր դարձած է նորաստեղծ իր յայտն լուսնային ամեն ինչը: Մեծարող իսկապետաբան է, կը վկայէ այն իրողութեան որ իսկապետաբան լուսնային գոնորութեանց փորձած ենք եւ կը փորձենք գալ եւ հաստատ-

իազար գաղթականներուն եր եղած՝ որոնք 1880-ական թուականներէն յետոյ Ամերիկա եկան, գործարաններու մէջ ան աշխատանք տարին, շարքը քանի մը տալար խնայելով՝ «Երկիր» վերադարձաւու իր կամ երկրին մէջ մնացած իրենց իարգատներուն օգնելու համար:

Այստանմանցիւ, ի յաշ Ամերիկայի գիտիւն, եւ անցնող սերունդներուն, «Աուրիչ»-ի այս քիտով կարգ մը տեղեկութիւններ կուտանք Քրիստոսի փոլոմպոսի մասին, եւ ապա կը իրատարակենք մի քանի յորատներ: Առաջինը՝ Այդա Յովհաննէս Բարիկեանի մասին է, որ քիչ մը ուշ, ինչ ալ գտաւ Ամերիկան: Զոհրայ Հեռիկեանի յորատում մէջ կը բնագրի Փոլոմպոսի ... հայ ըլլալուն պատմութիւնը: Ուշագրաւ է սակայն, Բարգէն Եղա. Կիւլեւեղեանի յորատը, գոր յապատումներով կը վերադարձանք այստեղ: Քիտոյի 1922-ի «Ամերիկոս Տարեցոյց»-էն բարեցիւնք այս յորատը, եւ ուր, անկրկնելի թէւորիկ, կըսէ, իր իմաստական ծանօթութեան մէջ՝ «Ամերիկոս յորտող հայու մտաներունը»:

(Շար. էջ 2)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՈՔԻՆ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԸ

(Չար. էջ 1-18)

Է ամուշտ, թէ վարը Հայաստան ի՞նչ կիմնու վրայ պիտի կազմուի՝ Բարա-Բակը, ընկերային, տնտեսական, վարչական եւ այլ տեսակետներով: — Հանդիպիր հրատարակի՞նք մերհուռ Արմաշականի մը այս յօդուածը, որ վերլուծական ընդդրանումն է ամերիկեան մեծ ազգին կատարած յառայողութեան, իր առաջին օրերէն պատմի միջինն այս օրուան իր գարգառմի բարձրագոյն աստիճանը, թափազին փաստաթուղթ մըն է՝ թիւարկուող համար մեզ բոլոր այն որչափ տկարամեծները որոցմով ազգ մը կրնայ իր գոյութիւնը ապահովել Բաղաձարութեան համբուն մէջ»:

Այսօր այ, մանաւանդ երբ մեր Հայաստանը Բուրբուն ու երբայրները Ամերիկային կը նային իրրոյ մեծ եւ ընդօրինակելի երկրի մը, մեծապէս ուսանելի է Բարգէն Եպիսկոպոսի մտածումները: Երանի թէ Հայաստան մը մեր Բայրերն ու երբայրները անիկ մտնեն ծանօթանան այս երկրին եւ տեսնեն լա՛ւր, գեղեցիկը, ազնիւը, մարդայինը, փոխանակաբար խարնու-լու երկայթքներէն, եւ յառաջը առնելու համար տրտում պատրաստ-խարքիւնենան:

* * *

Ամերիկա այնպիսի աշխարհ մըն է որուն մասին գրուածներ եւ իստուածներ ո՛րչափ իրական այնչափ ալ ճշգրտ չեն աւ հասարակ. եւ այս պատճառաւ, անոնք որ չեն տեսած այս երկիրը՝ երեսակայական, երազային գաղափարներ կը կազմեն անոր մասին: Զոր օրինակ, Ամերիկայի հարստութիւնը, Ամերիկայի մէջ գրաւ վաստակելու հնարաւորութիւնները (որոմք ստույգ են), ա՛յնպիսի առասպելական չափերով կ'ըմբռնուին այս երկիրը չճանչցողներու կողմէ, որ այդ ըմբռնումը բոլորովին կը հեռանայ իրականութենէն: Այսպէս՝ Նիւ-Յորքի հռչակարար կաթածոյ կամուրջներուն նկարագրութիւնը, երկնաբերձ շէնքերուն պատմութիւնը, Նիւակարա Զրվէֆին գրական պատկերացումը, եւն. երեսակայական այնպիսի պատկերներով եւ գրծերով կը սպասուորուին այս երականութեան անձանօթ եւ հետազօրիր հեռաւորներու մտեղորուն վրայ, որ երբ անոնք օր մը Ամերիկա գան եւ իրենց աչքերով տեսնեն այս բաները, կը հասկնան թէ ո՛րչափ տարբեր են իրականութիւններէն որոնք սակայն չեն գաղբիր ըլլայէ ինչպէս ընտանիք հրաշալիքներ, նոյնպէս եւ ճարտարագիտական մեծագործութիւններ: — Դարձեալ, Ամերիկայի մարդարեակն նպատաներու կազմակերպեալ գործունէութիւնը Մերձարդ եւ Հեռարդ Արեւելքի մէջ, նոյն իսկ Ամերիկայի Հայոց մէջ կատարուած հանգանակութեանց արդիւնքն է նպաստ ազգային պէտքերուն, եւ հայ հարուստներու հարուստութեան գործունէ կազմուած գաղափարներ ամենեւին չեն համապատասխաներ իրականութեան: Ուստի մեր այն մեր Հայ ժողովրդեան տեսակէտէն, կրնանք յայտարարել, թէ հայ ուղերք ընտանիքն եւ բնակավայրն աւել երեսակայական է երազային, եւ հեռաւորար պէտք ունի զբաղան մարզանքի, մա՛նաւանդ

իր ազգային վերաշինութեան շրջանին սիրգը: Եւ Ամերիկայն է, ըստ իս, այն զբաղան երկիրը որ կրնայ կարգապար եւ օրինակ ըլլալ մեր ժողովուրդ-գին՝ իր կառավարական ձեւով որ իրապէս ժողովրդագետական է եւ գործնականապէս տէ՛նկարգապարգան, եւ սակայն խիստ ներապլաակ արտայայտութիւններով: Դարձեալ, այն երկիրն է այս որ կրնայ իր եւ տիպար ծառայել մեր ազգային վերաշինութեան բազմադիմի գործին. վասնզի Ամերիկա երկիրն է Դրականութեան. եւ այդ զբաղանութիւնը կը տեսնուի ու կը շօշափու ամեն տեղ, Միացեալ կամ Դաշնակցային կառավարութեան Կեդրոնէն (Ուսանիքներէն) մինչեւ վերջին գիւղն ու ագարակը: 48 Նահանգաց մէջ առանձին առանձին եւ իւրաքանչիւր Նահանգի բոլոր ստորաբաժանմանց մէջ ժողովուրդն է տիրողը, ժողովուրդն է կառավարողը, օրէնքներու, սովորութեանց եւ աւանդութեանց հիմնարկ ու ներդաշնակ այլապատմութեանը մը, այնպէս որ ո՛չ միայն քաղաքացիներուն անհատական ազատութիւնը կատարեալ է եւ ազատ-հովեալ օրէնքով եւ օրէնքի սահմաններու մէջ, այլ նաեւ Նահանգներուն վարչական ազատութիւններն ու ինքնուրոյնութիւնները: Եւ այս ազատ քաղաքացիութիւնը, այս ազատ ինքնուրոյն Նահանգային կառավարութիւնն են որ կերտած պագման են Մ. Նահանգաց ժողովրդական ազատ կառավարութիւնը որ, ինչպէս ըսի, կրնայ կաղապար, օրինակ եւ տիպար ըլլալ մեր ազգին եւ ժողովրդ-եան:

Զուիցերիա եւս ստեպ մասնանիչ կ'ըլլայ իբրեւ տիպար Նոր Հայաստանի մը, իր լեռնային ամփոփ տեղագրութեամբ եւ իր ուրիշ հանգիստ-բերկուրդին համար, ճիշդ այն պատճառաւ որ Ամերիկա անիկ ծանօթ է հայ ժողովուրդին որուն խոշոր մէկ զանգուածը տաշտախիլ եղած է Մայր Հայրենիքի հողէն եւ տնկուած Ամերիկայի հողին վրայ, դիւրութեամբ ընտելանալով նոր երկրի կենցաղին ու պայմաններուն, եւ կրնանք նաեւ յայտարարել նուազ վերապահութեամբ մը, թէ ամերիկանացի է իր ընդհ. դիժներն մէջ:

Ամերիկա իր յաջողութիւնները, իր այսօրուան դիրքը կը պարտի իր ազգային խելքին մշակութեան: Ամերիկայի երեքարեան պատմութեան ընթացքին մէջ կազմուած, մշակուած, խնամուած է իր ազգային խելքը եւ արտայայտուած է գործողայէն: Անբընական, տարբերակ, հետեւաբար եւ վնասաւոր բաներ չկան Ամերիկայի շինութեան եւ վերաշինութեան կերպերուն եւ մեթոտներուն մէջ:

OUTREACH

A monthly publication of the Armenian Apostolic Church of America

138 East 39th Street, New York, NY 10016

Telephone: (212) 689-7810

Fax: (212) 689-7168

Archbishop Mesrob Ashjian, Prelate

Mardirous Minas-Haftvani, Managing Editor

His Papazian, Editor

OUTREACH (USPS 426-490) is published monthly, with the exception of 11 months (March-April and June-July-August combined issue, by the Prelacy of the Armenian Apostolic Church of America. Unsolicited manuscripts are welcome; please include a stamped, self-addressed return envelope. Signed articles do not necessarily reflect the policy of the Armenian Apostolic Church of America. Send all correspondence to the above address to the attention of the Editor. Printed in the United States of America. Second class postage paid at New York, NY 10016. Postmaster: Send address changes to OUTREACH, 138 E. 39th Street, New York, NY 10016.

ISSN: 10643087

Ամերիկայի յատուկ բան մը կայ այս նորագոյն եւ նորակազմ ազգին քաղաքացիական կեանքին կազմակերպութեան մէջ, եւ այս բանն է Ամերիկեան ինքը, ըսենք ԱՄՆԻՆՆԱՅԻ ՈՔԻՆ: Այդ ոգին կ'արտայայտուի եւ կ'արտացոլայ 300 տարիներէ է վեր, այսինքն Նոր Ամերիկայի չիմնարկութենէն ցայժմ, միշտ կատարեալագործեալ պայմաններով: Ամերիկա այդ ոգուն կը պարտի իր դրականութեան ու յառաջելի մութիւնը՝ իր քաղաքակրթութեան շինուածքին մէջ: Ասոր համար է որ եւ կ'ուզեն այդ ոգին ի վեր հանել շարք մը իրողութիւններով, եւ մեր ժողովուրդին ուշադրութիւնը հարկերէ ցտնցաբար:

Ահա՛ բուն նկարագրին Ամերիկեան ազատութեան որ սահմանուած է օրէնքով. եւ օրէնքն Ամերիկայի մէջ խիստ յարգելի է: Ուստիք զատարանին արտաքին դրան վերեւ արձանատուութեան գրուած է. Օրէնքի իրաւաստութիւնը Ազատութիւնը: Լորտ ձ. Պրայտ որ Ամերիկայի պատմութիւնը հմտօրէն գիտէ եւ շատ լաւ կը ճանչնայ Ամերիկան, կ'ընէ. «Անպիսիա Ամերիկայի մէջ օրէնքի յարգն ու կարգ-կանոնի արժէքը պահ մը ցնցուած են ինչ ինչ տեղեր, բայց ամենեւին չեն կտրուած: Ազատութիւնն Ամերիկայի մէջ, ինչպէս այլուր, ատեն եղած է որ չարաչար գործածուած է, բայց ամերիկեան ժողովուրդին ազատութեան պարձանքը, ազատութիւնը պահելու իր կառահարութիւնը, նաեւ գայնատողջանող իր գորութիւնը չեն պակասած ամենեւին, եւ կարող ըրած են գինք, որ նորին ձեռք բերէ ինչ որ կարծուած էր թէ կորսուեր է՝ որովհետեւ ազգեր բարոյական ոյժն-

րով է որ կ'ապրին, (it is by the moral forces that nations live):

Նոր Հայաստանը կերտելու եւ վերաշինելու ատեն, մենք պարտինք աչքի առնել ունենալ Ամերիկայի օրինակն ու փորձառութիւնները: Մեր ազգը շատ հին եւ փառաւոր անցեալ մը ունի, փառաւոր իր բարձրութիւններով եւ զգաստացուցիչ՝ իր անկումներով: Ուստի երբ ան կը տեսնուի Ազատութեան եւ կը մեռնի անոր պիտուն, ո՛չ թէ նոր առանձնաշնորհում մը ստանալու ջանքեր եւ գոհորդութիւններ են ատենք, այլ իր կորուսած իրաւունքները վերահաստատելու համար թանկագին եւ արդար պայքար մը: Ձեռք կրնար մեր ազգային պատմութիւնն ուրոյնալ եւ խղի մեր յարաբերութիւնները՝ մեր ազգային անցեալի հետ: Եթէ ուրուստիք ամենին գորարար փաստերն ու սպասուողները, եթէ խղենք զանոնք, կը ժողովինք նորաստեղծ անտուրու-թեանց մէջ: Վասնզի Ազգ մ'ազգ է իր ամբողջութեամբ, իր պատմական լրութեամբ: Խորունկ եւ միանգամայն յստակ գիտակցութիւն՝ մեր գաղտին բնութեան մասին, յարգանք եւ հետազօրութիւն՝ մեր ազգային պատմութեան եւ աւանդութեանց, չափաւորութիւն, խոհեմութիւն, համբերութիւն եւ յարատեւութիւն. ատենք պայմաններ եւ առաքինութիւններ պէտք են ըլլալ ո՛չ միայն իւրաքանչիւր Հայու անհատական կեանքին զարգացման, այլ նաեւ մեր ազգային կեանքին վերահաստատութեան համար:

ԲԱՐԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ Ուօրթրաւում, Միւս., 26 Օգո. 1921



On Friday, September 25, the Grand Commander of the Knights of Vartan, Kegham Tcholakian, together with past commanders and members of the Council, visited Archbishop Mesrob Ashjian at the Prelacy. In attendance were members of the Prelacy's Executive Council and Prelacy Ladies' Guild.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵՂԱՐԶԸ

Չար. էջ 1-18

Վուրդը, 99 տոկոսով իր ձայնը լսելի դարձնելով որոշեց Անկախեանալ, որոշեց Ազատութիւնը գրիւն այս անգամ չկորսնցնելու գնով: Միայն 10 հարար ստրկամիտ հողերն ուղեցին ապրիլ գերութեան մէջ:

Ուր Տիրոջ հողին է՝ այնտեղ է ազատութիւնը: Սրբազան Հայրը, յուզումալից ըսաւ. «Մեր բազմազարչար հարեւնքը եւ ժողովուրդը ազատ է այսօր եւ անկախ: Նորէն պետութիւն զարձանք ինչպէս որ էինք 1918-ին: Անգամ հնք Միացեալ Ազգերու մեծ ընտանիքին: Ունինք ժողովուրդի ձայներով ընտրուած նախագահ յանձին Պր. Լեւոն Տէր Պետրոսեանի: Մտազուտ եւ անտեսուած Եռագոյն Դրօքը կրկին բարձրացաւ. Խորհրդարանին վրայ: Զինանշանը, Հայկական Պետական Մարդերը նոյնն է ինչ որ էր 1918, Մայիս 28-ին»:

Այսա՛ Սրբազան Հայրը, իր հարգական պատգամը վերջացուց հետեւեալ սրտաբուրի խօսքերով. «Այսօր՝ երբ կը տոնախմբենք մեր Հայրենիքի Անկախացման Ա. Տարեդարձը՝ սրտաբոխն կը շնորհարարենք եւ մեր

ջերմալին խնդակցութիւնները կը յայտնենք հանրապետութեան նախագահին՝ Պետական կազմին, մարդկով բոլորին առողջութիւն, ոյժ, կորով եւ մանաւանդ իմաստութիւն, գաղտնելու միայն ու միայն մեր հայ ժողովուրդի գերացուն շահերուն եւ միանանականութեան համար:

Կոչ կ'ուղղենք բոլորին հայրաքար, որ նեցով ըլլաւ հարցնիքին: Ձեր տաղանդներով, նիւթապէս եւ բարոյապէս օգնեցէք Հայաստանի բարգաւաճման ու վերելքին համար: Մարդենք որ, մեր հարցնիքը, այնեւ ստրկութիւն չտեսնէ: Մէկ բան կայ սակայն որ պէտք էջ յոռնանք բոլորս ալ անխոր: Արցախը եւ Արցախահայրութիւնը որոնք հերոսական պայքար կը մղեն թօթափելու համար թուրքին եւ ազերիին լուծը: Օգնենք որ Արցախը ազատագրուի եւ միանայ Մայր Հայրենիքին որմէ բունակալ ուժերու միջոցաւ 70 տարի բաժնուած է»:

Մեծ ուշադրութեամբ ունկնդրուեցաւ Սրբազան Հօր Պատգամը: ԹՈՐՈՒՄ Ա. ԳՆՆՅ. ՅԱԿՈԲԵԱՆ

Levon Ter Petrosyan Speaks at UN; Confers With Community Leaders

ԱՂԱ ՅՈՎ ՀԱՆՏԵՄ ԱՐԱՐԿԻԱՆՆԵՐ

(Տար. էջ 3-և4)



AIRPORT RECEPTION: Archbishop Mesrob Ashjian and other community leaders welcomed President Levon Ter Petrosyan upon his arrival at New York's JFK Airport. Also in photo above are, left to right, two unidentified aids to the President; Louise Simon, representing the AGBU; Hiram Hovhannian (hidden behind President), representing the Armenian Assembly; Mrs. Levon Ter Petrosyan and Ambassador Alexander Arzumani.

Levon Ter Petrosyan, President of the Republic of Armenia, arrived in New York on Saturday, September 19, accompanied by his wife. The President and First Lady along with their entourage received a low-keyed reception at the airport with about 150 community leaders in attendance, including Archbishop Mesrob Ashjian, metropolitan area clergymen and executive council members representing the Prelacy.

During the next few days the President had the opportunity on several different occasions to meet with the Armenian American community. Sunday morning the President attended a breakfast meeting with community leaders followed by a public appearance in the afternoon at the Marriott Marquis Hotel with more than 2,000 people in attendance.

On Wednesday, September 23, President Ter Petrosyan delivered his inaugural speech to the United Nations and attended a reception hosted by the Armenian Embassy in honor of the first anniversary of the Armenian Republic.

Mrs. Levon Ter Petrosyan visited the Prelacy office on September 24 to confer with the Prelate and members of the Prelacy Ladies Guild about the Prelacy's campaign to aid orphans in Armenia and Artsakh and also the Prelacy's commitment to the Home for Handicapped Children in Yerevan.

It is unfortunate that this important and historic event was not organized in a manner worthy of the occasion and to receive as much non-Armenian publicity as possible. Many community leaders agreed that the organization of the event left much to be desired. Furthermore, it is unfortunate that the service at St. Vartan Cathedral was not made even more significant and special with a unified service rather than perpetuating the division at a time when our Homeland needs the help of every Armenian.



MEETING WITH FIRST LADY: Archbishop Mesrob Ashjian with Armenia's First Lady, Mrs. Lucia Ter Petrosyan, and members of the Prelacy Ladies Guild during a meeting at the Prelacy.

Prelacy Bookstore Catalog - 1993

The Prelacy Bookstore issued its 84-page catalog. Hundreds of titles in Armenian and English, Tapes, Records, Videotapes and Gifts for all occasions To receive a copy of the catalog, please call: 1 (212) 689-7810 or write to: Prelacy Bookstore 138 E. 39th Street, New York, N.Y. 10016

վաճառականները եւ անոնց կ'իմացնէ թէ՛ նախն չուր աննեղուն պատճառաւ պիտի ստիպուի բոլոր բեռները ծովը թափել:

— Բայց ո՞րք կը գտնուինք, ո՞րք կը դիմենք, կը չարցնեն մէկ քանին:

— Ձեռ գիտեր թէ ո՞րք կը գրտնուինք, չեմ գիտեր նաեւ թէ ո՞րք կը դիմենք, որովհետեւ ամէն գործիք խորտակուած ու արուած է արգէն կը պատասխանի նաւապետը:

— Բայց վերջապէս տեղ մը պիտի չաննինք, վրայ կուտան միւսները:

— Անշուշտ պիտի չսանինք, պայմանաւ սակայն, որ նախապէս նաւը փրկենք, եւ ասոր չամար անհրաժեշտ է բեռները նետել:

Եւ արեւի չամոզիչ գառնաւոր չամար՝ նաւապետը ցոյց կուտայ եռակայմին յետապիղծը չաւաքուած խուրձ մը կիններ, — որոնք իրենց գաւակները կուրծքներուն վրայ սեղմած անհելի վայնաստուններու դէմ կը բռնէին փոթորիկին կանչերուն, — ու կը յարէ:

— Եթէ ձեռ կեանքը ձեզի չամար արժէք չունի՝ գոնէ սա խեղճերը մեզցցէք ...

* * *

Ազա Բարբիկեան անխօս վկան եղած էր այդ իրստացումներէն: Ինք ալ գիտէր որ նաւապետը իրաւունք ունի, բայց եթէ բեռները իսկապէս ծովը թափէին, իր ամբողջ արտուրդները վրայ պիտի ընթար, եւ անկէ անդին յայտնի չէր Յետոյ՝ ինք ստակայն յուսակից էր: Երբ արտագազարմ մը իրեն կ'ըսէր թէ պիտի փրկուին, եւ նոյն իսկ մտա ատեննէ, թերեւս այդ օրն իսկ, թերեւս քանի մը ժամէն: Պէտք էր միայն ճար մը գտնել՝ նաւապետին որոշումը գոնէ օր մը յետաձգելու հնարաւ, եւ ինք պէտք եղածին արեւի հնարամիտ էր ու կը նայր միջոց մը խորհէի:

Երբ սիրս վաճառականները կուգան իր ալ կարծիքը իմանալու, ան արդէն իսկ գտած է հնարը ու կը պատասխանէ արհամարհու շեշտով մը:

— Ես արեւի մեծ գաղափար ունիմ ձեռ վրայ, չէի կարծեր որ ամճարակ մարդու մը իրազէն խարուհու չպի միամիտ է:

Միաները ապշուրեցած իրեն կը նային, չեն գիտեր թէ ինչ պատասխանին:

— Կը գարմանա՞ք, կը յարէ Ազա Բարբիկեանց, բայց գուր չէ՞ք չսակնար սովաւին թէ այս հոլանտացին նաւապետուրէնէն բան չի չսակնար. այսքան օր կ'ընէ փոթորիկին դիմացանք, եւ չիմա որ փրկուիմք ձեռ է ...

— Փրկուիմք մօ՛տ է, կը գրչեն բոլորը մէկ գրեթէ միաբերան:

— Հապա՞ ... թող իր գործը ինձի յանձնէ այս օրն ու գիշերը, եւ վաղը ձեզ ցամաք կը չաննիմ:

— Բայց գու՛ն նաւապետուրէն գիտե՞ս ...

— Ես նաւապետի գաւակ եմ, եւ ամբողջ կեանքս նաւերու մէջ անցուցեր եմ ... ձեզի կ'ըսեմ որ վաղը արտու պիտի փրկուինք, եւ այդ անիները եկեր սպրանջները ծովը թափել կ'ուզէ ...

Վաճառականները անմիջապէս կ'երթան կը գտնեն նաւապետը, ճար կ'ընեն՝ ճարակ կ'ընեն, կը չամոզեն զայն, եւ նոյն օրն իսկ՝ տակաւին ցրեցէ չեղած Ազա Բարբիկեան կ'երթայ կը փակուի նաւապետին խուրձէն: Ընտել աննեղով մարտնչուած արտուրդները, որ արգէն ոչինչի վերածուած էր այդ սպրանջների պահերուն մէջ, քանի որ նաւապետը

մէկ քան միայն կը նայր ընի. ամենայն հուրեւանք չամակերպիլ փոթորիկին ստանալիք ուղղութեան:

Ի՞նչ կ'ընէ այդ օրը, ի՞նչպէս կ'անցնէ այդ գիշերը: Կրկին վերոյիշեալ նամակի ծուկնէն կը դիմենք այս կէտը լուսաբանելու չամար, —

«Ձօրն ողջոյն եւ գգիշերն ողջոյն գրիով եւեթ էի պատասխալ, է գուճա անկեալ յաղթա կացի, չարեալ ինչ գկայ: Ան իմէ՞ ոչ սպանէր յոյս իմ. չարտուայի չանապաղ զի փրկերց է գնեղ Ամենակայն Աստուած, եւ մինչեւ ծայր արձակեալ արեգական՝ կայր մեզ ողջունել գերկիր: Եւ յաղթա կայի անդալար, ապաւինեալ եւեթ է չատուտ, եւ արդարեւ չաւտաք իմ փրկութիւն եղեն մեզ»:

Ինչպէ՛ս այս հրաշքը մեկնել մերինին պէս սկեպտիկ դարու մը մէջ: Նոյն գիշերը իսկապէս փոթորիկը կը գաղթի, եւ ատուտի՛ն՝ հագիւ լոյսը ցաթած՝ մշուշի մէջ թաղուած բայց յայտնապէս տեսանելի ցամաք մը կը նշմարուի հեռուէն:

— Յամա՛ք, ցամա՛ք, կը գուտ ամէն մարդ:

Եռակայմը կը թնդայ ուրախութեան եւ հրճուանքի աղաղակներով վաճառականներ կուգան իրենց երախտիքը կը յայտնեն Ազա Բարբիկեանի, կը խոստանան իրենց աղաղակներն կարեւոր մաս մը իրեն նուիրել: Ամօթահար նաւապետն ալ կուգայ ներում կը խնդրէ, նոյն իսկ կ'ընէր իրենց զարդուկներն ու գինեղերը չաննելով պը բերեն ստուրններուն արմել կը սիւրեն եւ իր ձեռքերը կը չամբուրեն:

Ողջունուած ցամաքը Ամերիկան էր:

Ազա Բարբիկեանց կը ժողբերէ որ իրմէ մտաւարապէս երեք զար ստաղ ալ իրօք մարդկային պէրտ մը նոյնքան անձկութեամբ լսած էր այդ «Յամա՛ք, ցամա՛ք» աղաղակը, կը խորհէ որ եթէ Գրիտապիոր Գրիտապոս Ամերիկան գտած չէլէսը՝ ողջունուած երկիրը ո՛չ միայն փրկութեան գուռ մը չպիտի լլլար իրենց չամար, այլ նոր թշուարութեամբ եւ նոր չարարածներու աղբիւր մը պիտի գտնուար. անսահման երակտապիտութիւնն մը կը գգայ ծնունդացի նշանաւոր նասորդիին նկատմամբ, եւ կ'որոշէ առաջին արգիւ անոր յիշատակը յաւերժացնել նաեւ իր ազգակիցներուն մէջ:

Հագիւ Եւրոպա անցած՝ իրեն քան գործ կ'ընէ Գրիտապոսի վրայ դերուած լաւագոյն երկի մը հետախուզութիւնը, երկա՛ր ատեն կը փնտռէ ու վերջապէս կը գտնէ Ուիլեմը Ռօպլերթը՝ սընը քառահատոր մէկ գործը, զոր իրեն հետ թրիէսը տանելով թարգմանել կուտայ Հ. Սիմաս վրդ. Գապարեանցի (*): Ինք չեննէ կուտայ նաեւ Գրիտապոսի ամենահաւատարիմ մէկ պատկերը որ Հ. Գապարեանցի երկհատոր թարգմանութեան սկիզբը գետեղուած է, այդ գիրքին մէջ կը գտնենք նաեւ Ազա Յովհաննէս Բարբիկեանի կենդանագիրը ուրկէ արած ենք ներկայ պատկերը:

(*) «Վիպասանութիւն Ամերիկայ. Արարեալ է վարդապետէն Կուրիէլմիայ Օսպէթրուոնէ եւ բաժանեալ յուրիւ զարուրդներն թարգմանեալ նախ յանգլիական ընտրէ յոտապկան կեցու, եւ անոր է չայ բարբար է չար Միմաս վարդապետէ Գապարեանց Արթիւրեանի ի՛ մբարանութենէն բազմապատասակ բարեկիչատակ Միլեթաբեալ Բարունակաբարի եւ Մեծի Աբրահի: Յամի Տեառն 1784, է Փրիշտը, է տղարանի Հարց Միլիթաբեանցի:

DID YOU KNOW....Columbus estimated the size of the Atlantic Ocean partially from reading his Bible. He had read in the Second Book of Esdras (in the Apocrypha) that God created the world in seven parts, six of them from dry land and the seventh water. He thus calculated that the ocean separating Portugal from Cipangu (Japan) was one-seventh of the earth's circumference, or about 2,400 miles. He figured that by sailing 100 miles per day, he could reach the Indies in 30 days.